

2016 թ. Հայաստանում խոսքի ազատության վիճակը. ԽԱՊԿ-ի տարեկան գեկույց

Հունվար 23, 2017

2016 թ. Հայաստանում խոսքի ազատության վիճակը. ԽԱՊԿ-ի տարեկան գեկույց



Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն (ԽԱՊԿ) հունվարի 17-ին ներկայացրեց Հայաստանում խոսքի ազատության վիճակի եւ ՁԼՄ-ների ու լրագրողների իրավունքների խախտումների մասին տարեկան գեկույց, որտեղ անդրադարձել է ոլորտը կարգավորող օրենսդրության փոփոխություններին ու գործընթացներին:

Կոմիտեի կողմից առանձնակի ուշադրության է արժանացել ապրիլյան քառօրյա պատերազմի եւ հոկտեմբերյան երկրորդ կեսին «Սասնա ծռեր» խմբավորման՝ ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի վրա զինված հարձակման ու դրան հաջորդած լուսաբանման խնդիրները:

«Հայաստանյան ՁԼՄ-ներն ու դրանց աշխատակիցները գործել են ծայրահեղ անբարենպաստ պայմաններում», - տեղեկացրեց ԽԱՊԿ-ի նախագահ Աշոտ Մելիքյանը:

Ընդհանուր առմամբ կոմիտեի տվյալներով արձանագրվել են ֆիզիկական բռնության 10 դեպք, որոնցում տուժել են 26 լրագրող ու օպերատոր, ՁԼՄ-ների ու դրանց աշխատակիցների նկատմամբ այլ ճնշումների 52 փաստ, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի 33 խախտում:

2016թ. աչքի է ընկել իշխանությունների կողմից լրատվամիջոցներին օրենսդրական տարբեր նախաձեռնությունների միջոցով զսպաշապիկ հագցնելու փորձերով: Դրանցից կարելի է առանձնացնել ՀՀ ընտրական նոր օրենսգրքի 65-րդ հոդվածը եւ ընտրություններին վերաբերող՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը:

Տարվա ուշագրավ իրադարձություններից էր անալոգայինից թվային հեռարձակման ամբողջական անցումը, որը պաշտոնապես ավարտվեց հոկտեմբերի 26-ին: Այնուամենայնիվ այս գործընթացը լուրջ խոչընդոտ հանդիսացավ մարզերում գործող 10-ից ավելի տեղական հեռուստաընկերությունների համար, որոնք հայտնվեցին փակման եզրին: Այդ հեռարձակողների խնդիրների լուծման համար ԽԱՊԿ-ի եւ գործընկեր կազմակերպությունների նախաձեռնած բանակցությունները բնագավառի պատասխանատուների հետ դեռ շարունակվում են:

Ավելին [այստեղ](#) [2]

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[ԼՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/cpfe-freedom-of-speech-annual-report-2016>

Links:

[1] <http://www.jnews.am/files/FoS.jpg>

[2]

<http://khosq.am/reports/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AD%D5%B8%D5%BD%D6%84%D5%AB-%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%AB-9/>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>